Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 2-ի N 914-Ն որոշման

# ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆԵԼՆ ԱՆՀՆԱՐԻՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԴՐԱՆՔ ԱՆՁԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐՈՒՄ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց փախստականի նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրելիս՝ անհրաժեշտ կենսաչափական տվյալները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում (այսուհետ՝ ոստիկանություն) հանձնելն անհնարին լինելու դեպքում դրանք անձի գտնվելու վայրում վերցնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի շրջանակներում փախստականի նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրելիս՝ անհրաժեշտ կենսաչափական տվյալները ոստիկանությունում հանձնելն անհնարին է համարվում, եթե անձը՝

1) գտնվում է քրեակատարողական հիմնարկում.

2) բժշկական կազմակերպությունում հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում է ստանում.

3) հաշմանդամության, հիվանդության կամ վիճակի, տարիքային կամ այլ խնդիրներով պայմանավորված՝ զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից:

3. Փախստականի նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ստանալու համար անհրաժեշտ կենսաչափական տվյալները ոստիկանությունում հանձնելն անհնարին լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ է հանդիսանում սույն կարգի 2-րդ կետի՝

1) 1-ին ենթակետով նախատեսված դեպքում՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ոստիկանությանը հասցեագրված գրությունը՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձին նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրելու անհրաժեշտության վերաբերյալ: Ընդ որում, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը համապատասխան գրությունն ուղարկում է ոստիկանություն՝ փախստականի կողմից նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ստանալու գրավոր ցանկության հայտնումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում.

2) 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ համապատասխան բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքը կամ գրությունը.

3) 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ ինքնուրույն տեղաշարժվելու անհնարինությունը հավաստող՝ առողջության առաջնային պահպանման բժշկի կամ բուժող բժշկի կողմից տրված տեղեկանքը կամ՝

ա. փախստականի նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ առաջին անգամ ստանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից տրված տեղեկանքը.

բ. փախստականի նույնականացման քարտի կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի փոխանակման, ինչպես նաև կորած նույնականացման քարտի կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի փոխարեն նորն ստանալու դեպքում՝ Հայաս-

տանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության Արարատի, Վանաձորի, Գյումրու և Ջերմուկի համայնքապետարանների աշխատակազմերում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող սոցիալական աջակցության տարածքային բաժինների կողմից տրված տեղեկանքը:

4. Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետում նշված անձանց փախստականի նույնականացման քարտ կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տրամադրելու համար ոստիկանության անձնագրային ծառայություն դիմում է ներկայացնում փախստականի կարգավիճակ ստացած անձի խնամակալը կամ ներկայացուցիչը՝ կցելով սույն կարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը և խնամակալ հանդիսանալու հանգամանքը հիմնավորող փաստաթղթի պատճենը կամ լիազորագիրը (առանց նոտարական վավերացման):

5. Ոստիկանության անձնագրային ծառայությունը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումը կամ քրեակատարողական հիմնարկի վարչակազմից սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված համապատասխան գրությունն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է փախստականի գտնվելու վայրում շարժական սարքերով անհրաժեշտ կենսաչափական տվյալները վերցնելու և տեղում անձին լուսանկարելու գործընթացը:

6. Փախստականին անձը հաստատող փաստաթուղթը տրամադրվում է սույն կարգի 5-րդ կետում նշված գործընթացը կազմակերպելուց հետո՝ օրենքով սահմանված ժամկետներում:

7. Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետում նշված անձանց փախստականի նույնականացման քարտը կամ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը փախստա-

կանին տրամադրվում է խնամակալի կամ ներկայացուցչի միջոցով, իսկ սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձանց փաստաթղթերը տրամադրվում են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ